ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ

«ԹԻՎ 16 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ

375069 ք.Երևան Դրոյի -17
հեռ. 24-00-23

МЭРИЯ г.ЕРЕВАНА

<ПОЛИКЛИНИКА N16> ЗАО

375069 г. Ереван ул . Дро-17
тел. 24-00-23

N 133

«23» 03 2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ (գնման հայտը կցվում է):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԵԹԻՎ16Պ-ՇՀԱՊՁԲ-(11/15)-15/2»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ, ք, Երևան, Դրոյի 17, 28 սենյակ հասցեով, Գ. Վարդանյանին (հեռ. 010 010 24-04-70), մինչև 2015թ. ապրիլի 02-ը, ժամը 11:00-ն:

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի շենքում, ք, Երևան, Դրոյի 17 հասցում, 28 սենյակում, 2015թ. ապրիլի 02-ին, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերումը:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում “Շրջանակային համաձայնագրեր” բաժնի “հրավերներում կատարված փոփոխություններ” ենթաբաժնում):

Գնման ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա:

Սույն ծանուցմանը կցված գնման հայտում նշված քիմիական նյութերի այն չափաբաժինների գծով, որոնցով սահմանված են ապրանքների ֆիրմային անվանումները, գնային առաջարկ ներկայացնելու դեպքում, մասնակիցները գնային առաջարկով համարժեք ապրանք առաջարկելու դեպքում ներկայացնում են նաև առաջակվող ապրանքի ֆիրմային անվանումը և համառոտ տեխնիկական բնութագրերը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ